Նախ՝ տաճարի շինութեան թերութիւնը կամելով լցնել՝ որ գերապատիւ նախորդիս Թադէոս Արք-եպիսկոպոսի տասն ամեայ անխոնջ աշխատութեամբն շինվելով տաճարը, հասել էր մինչև լուսամուտների վերին շարքը, այն՝ մնացել էր երեք շարք պատերից և կամարները և տանիքը և տանիքի ժեշտը, իսկ միջից սեղանը՝ իւր աստիճաններով. ուստի կանչեցինք Ղուշի քաղաքից վարպետներ Սիմէոն Տէր Յակովբեանց և այլք. և սկսեցինք շինութիւնը։

Շինութեան արձանագիրը արդէն փորագրել էր տուել գերապատիւ Թադէոս Արք-եպիսկոպոսն արևմտեան դրան ճակատին, ըստ որում հէնց մի դուռն ունէր տաճարը, և իրաւունք ունէր արձանագիր թողնելու այն տաճարի վրայ, վասն զի՝ ինչպէս հաւաստեաւ իմացայ, Գեր. Սրբազանը շատ ու շատ աշխատել էր տաճարի շինութեան համար՝ բացի շատ անգամ անձամբ վերահասութիւն գործելուց՝ երկու անգամ Բագու էր գընացել օժանդակութիւն խնդրելու շինութեան համար և ստացել էր։ Օրհնեալ լինին Բագուեցիք, միշտ բարեպաշտ, միշտ առատաձեռն, և յիրաւի նոցա օժանդակութեամբն գեր. Սրբազանը կարողացել էր շինութիւնը այնքան յառաջ տանել, ինչպէս և յիշեալ արձանագրութիւնն կվկայէ, որ հետևեալ բովանդակութեամբն է՝

«Զքնաղ Տաճարս Աստուածային յանուն Սրբոյն Ստեփաննոսի Նախավկայի 'ի հիմանց նորոգեցաւ 'ի Հայրապետութեան ամենայն Հայոց Տեառն Մակարայ առաջին. ջանիւք և աշխատութեամբ Առաջնորդին Շամախւոյ Տեառն Թադէոս Արք-եպիսկոպոսի. արդեամբք բարեպաշտօն Հասարակութեան Բագու քաղաքի, 'ի թուին Հայոց 1335 և փրկչական 1886 ամի»։

1887 թուի Օգոստոսից սկսած՝ ստիպեցի շինութիւնը անշուշտ վերջացնել, որ Սաղիանի ժողովուրդը սուրբ պատարագի ձայն լսէ, որից եկեղեցւոյ շինութեան պատճառաւ՝ տասն տա-